ՀՏԴ 32.001 /479.243/ Քաղաքականություն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶՆ ԻԲՐԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՁԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ալվարդ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ *Ինքնավար մարզ, պետականության ձև, ազգային, ինքնավարություն, ինքնորոշում, օրենսդրական, քաղաքական համակարգ, իրավական, իշխանություն, պետական մարմին, կանոնադրություն, Լեռնային Ղարաբաղ*

Ключевые слова: *Автономная облость, формой государственности, национальный, автономия, самоопределение, закономерный, политическая система, правовой, самовластие, положение, государственные органы, Нагорный Карабах*

Key words: *Autonomous area, statehood form, national, autonomy, self-determination, natural, political system, legal, autoracy, situation, government bodies, Nagorno-Karabakh*

А.Абрамян

Образование НКАО как форма советской государственности

Рассматривая нацоинальные автономии в рамках Конституции и законов СССР, автор указывает на то, что НКАО в период существования советской власти этническим составом, политическими институтами, языком, культурой, традициями была состоявшейся формой советской государственности.

На основе архивных материалов НКР, автор прослеживает процесс формирования политической системы.

Главный вывод статьи – национальная автономия как форма государственности стала основой для политической независимости, что является законным и справедливым решением для армян Нагорного Карабаха, живущих веками на этой территории.

A.Abrahamyan

The Formation of NKAO as a Form of Soviet Statehood.

Considering national autonomies within the framework of the constitution and laws of the USSR, the author points out that NKAO during the period of Soviet power with its ethnic composition, political institutions, language, culture and traditions was a substantial form of the Soviet statehood.

On the basis of NKR archive materials, the author traces the formation of the political system.

The main conclusion is– national autonomy as a form of statehood became the basis for political independence, being the legitimate and fair decision for the Armenians of Nagorno Karabakh living in this area for centuries.

Ազգային ինքնավար կազմավորումները դիտարկելով ԽՍՀՄ սահմանադրության և օրենքների համակարգի սահմաններում՝ հեղինակը եզրահանգում է, որ խորհրդային իշխանության տարիներին ԼՂԻՄ-ը իր ազգային կառուցվածքով, քաղաքական ինստիտուտներով, լեզվի, մշակույթի, ավանդույթների ընդհանրությամբ կայացել է որպես խարհրդային պետականության ձև:

Արխիվային նյութերի հիման վրա հեղինակը մեկնաբանում է ԼՂՀ-ի քաղաքական համակարգի կազմավորման գործընթացը:

Հոդվածի հիմնական եզրահանգումն է՝ ազգային ինքնավարությունը՝ որպես պետականության ձև, հիմք է հանդիսացել քաղաքական անկախության համար, որը Լեռնային Ղարաբաղի տարածքում դարերով ապրող հայության արդարացի ձեռքբերումն է:

Խորհրդային Միության սահմանադրությամբ՝ միության էթնիկական կառուցվածքը իրավասության աստիճանակարգով կազմավորված միութենական հանրապետությունների, ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզերի և ինքնավար օկրուգների դաշնություն էր: Այդ հզոր դաշնության մեջ ինքնավար կազմավորումները գործել են միութենական հանրապետությունների շրջանակներում:

ԽՍՀՄ-ում ի սկզբանե հաստատված տոտալիտար իրավակարգի պայմաններում չէր կարող միության ստեղծումը կայանալ ժողովրդավարական հիմունքներով: Այն կատարվել է վերևից, կոմունիստական իշխանությունների կամքով, առանց էթնիկական հանրույթների կարծիքների հաշվառման: Դա արդարացվել է քաղաքական գաղափարախոսությամբ, որը անվերապահորեն

ազգայնականը ստորադասել է ինտերնացիոնալիզմին: Հասարակության կյանքի բոլոր բնագավառներում գերակայել են պաշտոնական գաղափարախոսության հիմնարար սկզբունքները: Հետևաբար՝ պատահականություն կամ վրիպում չի կարելի համարել պատմական Հայաստանի մասերը հանդիսացող Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հայտնվելը բոլշևիկյան իշխանության կամքով ստեղծված նորաթուխ Խորհրդային Ադրբեջանի շրջանակներում: Իրավական նորմերի կոխկրտումը հիմնականում պայմանավորվում էր Արևելքի մուսուլմանական աշխարհում սոցիալիզմի տարածման նպատակով օրինակելի Խորհրդային Ադրբեջանի կառուցման գաղափարախոսական մտքի հիմնավորմամբ:

Այստեղ կարևորում ենք փոքր անդրադարձ կատարել ադրբեջանցի կոչվող էթնոսի կազմավորման նախասկզբին, որի մասին առկա են օտարազգի պատմաբանների ու հասարակագետների հակադիր կարծիքներ: Այսպես՝ թուրք պատմաբան Ալթայի կարծիքով Արևելքի ամենահին և ամենավաղեմի ազգը թուրք ազգն է, որի մի մասնիկը ադրբեջանցի է, …թուրքերը հինգ հազար տարի առաջ են եկել ներկայիս այն վայրերը, որտեղ այժմ ապրում են: Թուրքիայի պատմությանը նվիրված մի համաժողովում զեկուցողները հայտարարել են. <<Թուրքերը եղել են աշխարհի քաղաքակրթության առաջին ջահակիրները>>: Թուրք պատմաբանները միշտ ձգտել են պանիսլամիզմը նույնացնել պանթուրքիզմին՝ հաստատելու համար, որ բոլոր թուրքալեզու ժողովուրդները պատկանում են մեկ ազգի և պետք է միավորվեն մեկ ընդհանուր պետականության մեջ:[1] Ադրբեջանցի պատմաբանները նույն գաղափարի հաստատումով իրենց նախնիներ են համարում Կովկասի աղվաններին: Մինչդեռ, պրոֆ. Վ.Վ. Բարտոլդի կարծիքով ադրբեջանական և աղվանական ժողովուրդները միմյանցից միանգամայն տարբեր են եղել:[2] Բարտոլդը ընդգծում է նաև, որ հայ հոգևորականների ջանքերով են կովկասյան աղվան ժողովրդի համար ստեղծել գիր ու գրականություն: Աղվանական այբուբենից հետո է միայն Սուրբ Գիրքը հայերենից թարգմանվել աղվաներեն:[3] Ադրբեջանական էթնոսի կազմավորման գործընթացը մեկնաբանվում է նաև ժամանակակից ռուսական հասարակագիտական մտքի կողմից: Մասնավորապես նկատի ունենք միջազգային հարաբերությունների՝ Մոսկվայի պետական համալսարանի քառահատոր հանրագիտական տեղեկատուն: Այստեղ ընդգծվում է, որ 1639 թվականին, Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև ընդունված պայմանագրի համաձայն, ներկայիս Ադրբեջանի տարածքը կցվել է Պարսկաստանին, իսկ 18-րդ դարում այդ տարածքում ձևավորվել են ավելի քան 15 խանություններ՝ Դերբենդի, Բաքվի, Գյանջայի, Շաքիի, Ղարաբաղի խանությունները: Ռուս-թուրքական /1806-1812թթ., 1828-1829թթ./ և ռուս-պարսկական /1804-1813թթ., 1826-1828թթ./ պատերազմներից հետո ժամանակակից Ադրբեջանի տարածքում ձևավորված խանությունները Թուրքմենչայի /1828թ/ և Ադրիանապոլիսի /1829թ/ պայմանագրերով Հարավային Կովկասի հետ մեկտեղ հռչակվել են որպես ռուսաստանյան տարածք: Նախկին խանությունները վերանվանվել են նահանգներ, գավառներ, օկրուգներ: 1840թ. կատարված ռուսական վարչական ռեֆորմի ժամանակ կայսրության քարտեզի վրա հայտնվել է Շամախու նահանգը, որը հետագայում վերանվանվել է Բաքվի նահանգ: Ռուսական կայսրության քաղաքական քարտեզի վրա Բաքվի նահանգը հայտնվել է միայն 1859թ, երբ Կովկասի վերակացու իշխան Ա.Ի. Բուրյատինսկու հրամանով Շամախու նստավայրից նահանգի կենտրոնական մարմինները տեղափոխվեցին Բաքու: 1850-ական թվականներից հետո Բաքվի նահանգը դարձել է Անդրկովկասում մուսուլմանական հանրության կազմավորման բնօրրանը: <<Այդ ժամանակից միայն

[1] *Տես Էնաեթոլլահ Ռեզա. Ազարբայջան և Առան., Երևան, 1994թ., էջ 48*
[2] *См. Бартольд В.В., Сочинения, т.2, ч.1, Москва, изд. Восточной литературы. 1963г., стр. 775*
[3] *См. там же, стр. 58*

կարելի է տեղեկատվություն տալ Անդրկովկասում մուսուլմանական հանրության միավորման սկզբնավորման մասին>>,-եզրահանգում է վերոհիշյալ հանրագիտական տեղեկատուն:[1] 1918 թվականի մայիսի 27-ին պանթյուրքիստական-մուսավաթական քաղաքական խմբավորման լիդերները հռչակում են <<Ազերբայջանի հանրապետությունը>>: 1920թ. ապրիլին բոլշևիկյան կարմիր բանակի զորքերը գրավել են Բաքուն և Ադրբեջանը հայտարարել խորհրդային հանրապետություն: Իսկ ինչպիսի՞ բախտ վիճակվեց Լեռնային Ղարաբաղին, որը մինչ այդ համարվում էր ինքնուրույն տնտեսական և քաղաքական միավոր՝ Շուշի կենտրոնով: Վերը վկայակոչված հանրագիտական տեղեկատուն նշում է, որ ԼՂԻՄ-ի կազմավորմանը նախորդել է ավելի քան երեք տարիների վեճը Մոսկվայի կենտրոնական իշխանական կառույցների միջև, ինչպես նաև Հայաստանի ու Ադրբեջանի խորհրդային ղեկավարների միջև: Այդ վեճի առաջին աստիճանը նշանավորվել է Ադրիեղկոմի 1920 թվականի նոյեմբերի 30-ի դեկլարացիայով՝ խոստանալով վիճարկվող Նախիջևանը, Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը ճանաչել որպես Խորհրդային Հայաստանի մաս: Հարցի այսպիսի լուծումը մասնավորապես պաշտպանել են Ի.Վ. Ստալինը և Սերգո Օրջոնիկիձեն: Սակայն վերջնական որոշումն ընդունվել է ՌԿ/բ/Կ Կովկասյան բյուրոյի 1921 թվականի հուլիսի 5-ի արտահերթ նիստում, որի բանաձևում Լեռնային Ղարաբաղը մտցվում էր Ադրբեջանի խորհրդային հանրապետության կազմի մեջ՝ լայն ինքնավարություն շնորհելու պահանջով:[2] Այս մեջբերումից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները. ա/ Լեռնային Ղարաբաղի տեղի որոշումը վիճահարույց հարց է եղել ոչ միայն Հայաստանի ու Ադրբեջանի խորհրդային իշխանությունների միջև, այլ նաև Մոսկվայի կենտրոնական իշխանական կառույցների միջև, բ/ ըստ երևույթին, հիմնահարցը լուծելու ժամանակ զգալի նշանակություն է ունեցել Նարիմանովի քաղաքական դիրքը: Նա բարձր պաշտոն էր զբաղեցնում կենտրոնական իշխանության կազմում և անձնական հարաբերություններ ուներ Լենինի և Ստալինի հետ: Հիմնահարցի ադրբեջանամետ լուծմանը նպաստեց նաև այն, որ հրապարակի վրա չկար հայազգի ականավոր հասարակագետ ու քաղաքական գործիչ Ստ. Շահումյանը՝ Բաքվի բոլշևիկյան Կոմունայի առաջնորդը:

Անդրադառնանք այն հարցին, թե Լեռնային Ղարաբաղի հայության քաղաքական կյանքում ինչպիսի՞ դեր է կատարել խորհրդային ինքնավարության այդ տեսակը: Արդյոք այդ տիպի ինքնավարությունը կարելի՞ է համարել պետականության ստեղծման ու կայացման ձև, թե՞ ոչ: Լեռնային Ղարաբաղից բացի՝ Ադրբեջանական Հանրապետության կազմում հայտնվեցին նաև ազգությամբ հայ բնակչության գերակշիռ մասով Խանլարի, Շամախու, Խաչմազի, Նորաշենի, Կութերաշենի շրջանների և Նախիջևանի տարածքները: 20-րդ դարի 60-ական թվականներին համարյա հայաթափվել էին այդ շրջանների տարածքները, մինչդեռ 1970-ական թվականներին ԼՂԻՄ-ի բնակչության 76 տոկոսը հայեր էին[3]: Ուրեմն ինքնավարության կարգավիճակը լրջորեն նպաստել է Լեռնային Ղարաբաղում հայապահպանմանը: Կարծում ենք, որ այս հարցի պարզաբանումը մեթոդոլոգիական առումով նպատակահարմար է մեկնաբանել պատմականության տեսանկյունով: Այսինքն՝ ինչպիսի իրադրությունում ու քաղաքական ուժերի ազդեցության և ռազմավարական նպատակաուղղվածության ինչպիսի պայմաններում է Լեռնային Ղարաբաղը բռնակցվել Ադրբեջանին: Այսպիսի հարցադրումներով հիմնահարցին մոտենալու դեպքում կարևորվում է նաև շեշտել ԽՍՀՄ-ի գոյության ողջ ժամանակաշրջանում կիրառված ազգային քաղաքականության ռազմավարական բնույթը: Խորհրդային Միության կազմավորման ու

[1] *Политические системы современных государств. Том 1, М., 2012г., стр. 22*
[2] *См. Там же, стр. 26*
[3] *См. НКАО за 60 лет, Баку, 1983г., стр. 6*

կայացման տարբեր փուլերում ազգային քաղաքականության ասպարեզում կենտրոնական իշխանությունը մշակել ու կիրառել է քաղաքական նպատակամետ տարբեր միջոցներ ու ձեռնարկումներ, որի ռազմավարական վերջնական խնդիրն է եղել ազգերի ու ժողովուրդների միաձուլումը:

Ճշմարտացիության սկզբունքին հարազատ լինելու դեպքում պետք է նշենք նաև որ այդքանով հանդերձ Լենինի ստեղծած տեսական ուսմունքում միշտ շեշտվել է ազգերի քաղաքական ինքնորոշման գաղափարը: Այն փաստացի արտահայտվել է Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո Լենինի ստորագրությամբ՝ Լեհաստանի ու Ֆինլանդիայի քաղաքական անկախության ճանաչման դեկրետով: Խորհրդային իշխանության առաջին տարիներին, որը կարելի է անվանել ազգային քաղաքականության կիրառման գործընթացի առաջին փուլ, կենտրոնական իշխանության վերաբերմունքը իր որոշակի արտահայտությունն է ստացել ԼՂԻՄ-ի կարգավիճակի հաստատման գործում: Ի սկզբանե ադրբեջանական իշխանությունները հակված չեն եղել ղարաբաղահայության համար որևէ ձևի ինքնավարություն ստեղծելուն: Դա անժխտելի է: Դրա հաստատումն է նաև այն, որ Լեռնային Ղարաբաղին լայն ինքնավարություն շնորհելու մասին 1921 թվականի հուլիսի 5-ի որոշման կատարումը երկարաձգվեց երկու տարով: Ըստ երևույթին, այդ որոշումից հետո էլ շարունակվել է վիճաբանությունը, և միայն կենտրոնական իշխանության ճնշման ազդեցության միջոցով է կազմավորվել ինքնավար մարզը: ԼՂԻՄ-ի կազմավորման մասին 1923 թվականի հուլիսի 7-ին Ադրբեջանի Հանրապետության Կենտրոնական գործադիր կոմիտեի ընդունած դեկրետի և մարզի կայացման կանոնակարգի մեկնաբանումը հաստատում է, որ եթե ընդունված փաստաթղթերի համապատասխան իրականացվեր գործադիրի քաղաքականությունը, ապա դա ինչ-որ չափով կհամապատասխաներ <<լայն ինքնավարություն>> հասկացությանը: Մարզի ստեղծման մասին դեկրետի փոքր ներածականում ընդգծվել է, որ նախկին ցարական ինքնակալական իշխանությունը ձգտել է թշնամանք սերմանել կայսրության մեջ ընդգրկված ազգերի և ազգությունների միջև՝ ընդհուպ մինչև փոքր խմբերի լիկվիդացումը: Վերացնելով ազգային թշնամանքը ժողովուրդների միջև՝ խորհրդային իշխանությունը ստեղծում է ինտերնացիոնալ համերաշխություն ժողովուրդների միասնական ընտանիքում: Կատարելով այդ խնդիրը՝ խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմը որոշում է Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմավորել ինքնավար մարզ՝ որպես Ադրբեջանի բազկացուցիչ մաս:[1] ԼՂԻՄ-ի կարգավիճակի մասին Ադրբեջանական Հանրապետության Կենտգործկոմի ընդունած կանոնադրությունում հիմնավորվում էին հետևյալ դրույթները.

ա/ Ադրբեջանական հանրապետության Կենտգործկոմի 1923 թվականի հուլիսի 7-ի որոշման համաձայն ԼՂԻՄ-ը մտնում է Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմի մեջ:

բ/ ԽՍՀՄ-ում, Անդրֆեդերացիայում և Ադրբեջանում գործող օրենսդրական ակտերը պարտադիր են ԼՂԻՄ-ի տարածքում:

գ/ ԽՍՀՄ-ում, Անդրֆեդերացիայում և Ադրբեջանում գործող օրենքների կիրառմամբ հանդերձ, Մարզգործկոմին իրավունք վերապահել հաշվի առնելու նաև տեղական պայմանները:

դ/ Սահմանադրական իրավունքներում ԼՂԻՄ-ի և Ադրբեջանական ՍՍՀ-ի միջև ծագող անհամաձայնությունները լուծվում են Ադրբեջանի Կենտգործկոմի նախագահությունում՝ Մարզգործկոմի ներկայացուցչի մասնակցությամբ:

ե/ ԼՂԻՄ-ի կենտրոնական իշխանական մարմիններն են՝

[1] *Տես. ԼՂՀ- պետ. արխիվ, ֆ-1, ց-1, կապ-1, պ.մ. 1, էջ 9*

- բանվորների, գյուղացիների, կարմիր բանակայինների դեպուտատների սովետների համագումարը,
- Լեռնային Ղարաբաղի Մարզային գործադիր կոմիտեն:

զ/ Ողջ գործավարությունը, դատավարությունը և ուսուցումը դպրոցներում ԼՂԻՄ-ում տարվում է մայրենի լեզվով:[1]

ԼՂԻՄ-ում դատական մարմինների կառուցման գործում մարզգործկոմին իրավունք էր տրվում՝ ա/ հաստատել և ետ կանչել ժողովրդական դատավորներին, բ/ կատարել այնպիսի բանտարկյալների ամնիստիա կամ ներում, որոնք հակահեղափոխական գործունեության պատճառով չեն ազատազրկված:[2]

Պետական-օրենսդրական այս փաստաթղթերում ուշադրության արժանի են հետևյալ հիմնադրույթները.

ա/ ԼՂԻՄ-ի կազմավորման մասին Ադրբեջանի ընդունած կանոնադրությունում ընդգծվում էր, որ ինքնավարության իրավունքը տրվում է ոչ թե Լեռնային Ղարաբաղին ամբողջությամբ, այլ հայաբնակ տարածքի մի մասին:

բ/ Կազմավորվող մարզային պետական-քաղաքական մարմինները տարբերվում են սովորական շրջանային տեղական մարմիններից իրենց ավելի բարձր սուվերենությամբ՝ իբրև կենտրոնական իշխանության մարմիններ՝ ի դեմս Մարզային սովետի համագումարի և Մարզային գործադիր կոմիտեի:

գ/ Սահմանադրական իրավունքներում Ադր.ՍՍՀ-ի և ԼՂԻՄ-ի միջև ծագող անհամաձայնությունները պետք է լուծվեին Ադրկենտգործկոմի նախագահությունում՝ քննարկման և բանակցությունների կարգով: Ուրեմն Ադրբեջանի իշխանությունների կողմից մարզային սովետի համագումարը փաստորեն ճանաչվում էր որպես պետական բարձրագույն կառույց:

դ/ Քաղաքական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ դատաիրավական մարմինների համակարգը, կազմավորվում էր մարզգործկոմի իրավասությամբ, այդ թվում նաև ամնիստիայի և ներման իրավունքները:

Ընդունված կանոնակարգով ԼՂԻՄ-ում ստեղծվել է կառավարման հետևյալ կառուցվածքը՝ վարչական բաժին, ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի լիազոր, ժողովրդական տնտեսական խորհուրդ, լուսժողկոմատ, հողժողկոմատ, առողջապահության ժողկոմատ, կենտրոնական գյուղացիական ժողկոմատ, կենտրոնական վիճակագրական բյուրո, քաղբյուրո, դատախազություն և զինկոմատ: Յուրաքանչյուր ժողկոմատ գլխավորում էր ժողովրդական կոմիսարը, որը հաստատվում էր մարզգործկոմի կողմից:[3] Կենտրոնական յուրաքանչյուր պետական կառույց պատասխանատու էր իր ենթակառույցներում կատարվող աշխատանքի համար և պարբերաբար հաշվետվություն պետք է ներկայացներ մարզգործկոմին: Կանոնակարգում մանրամասնորեն ներկայացվում էին կառավարման ենթակառույցների իրավունքներն ու պարտականությունները: Ընդունված դեկրետն ու կանոնակարգը իրավական հիմքեր դարձան ԼՂԻՄ-ի պետականության կազմավորման, քաղաքական համակարգի հիմնական կառույցների ստեղծման համար: Պետականության կազմավորման ու կայացման գործընթացում բացառիկ դեր կատարեց հայոց լեզվի գերակայությունը մարզի տարածքում: Ընդունված կանոնակարգի առաջին մասում նշված ընդհանուր և սկզբունքային պայմանների երկրորդ կետը հռչակում էր. << Ողջ գործավարությունը, դատավարությունը, ուսուցումը դպրոցներում ԼՂԻՄ-ում տարվում է

[1] *Տես նույն տեղը, էջ 10*
[2] *Տես նույն տեղը, էջ 25*
[3] *Տես. Նույն տեղը, էջ 24*

մայրենի լեզվով>>:[1] Կարծում ենք՝ Ղարաբաղում հայոց լեզուն շունչ ու կենդանություն է տվել նաև հասարակության քաղաքական կյանքին: Հայոց լեզվի գերակայությունը յուրաքանչյուր քաղաքացու ակտիվ մասնակցությունն է բերել մարզի քաղաքական հարցերի լուծմանը: Կարելի է ասել, որ Խորհրդային Միությունում քաղաքական ու հասարակական բոլոր կառույցների, բոլոր միավորումների կազմավորումը սկսվել է դպրոցական շրջանի առաջին դասարանից: Հասարակական-երիտասարդական կազմակերպությունների լայն ցանցը՝ սկսած հոկտեմբերիկներից, պետությունը հասարակության հետ կապող ակտիվ օղակներ են եղել: Իսկ Լեռնային Ղարաբաղում այդ օղակների տնօրինողը եղել է հայոց լեզուն: Հատկանշական է այստեղ հետևյալ փաստը. 1934 թվականին Ադրբեջանի հանրապետությունում գործում էին հանրակրթական դպրոցներ՝ 14 ազգերի ու ազգությունների լեզվով:[2] Մինչդեռ 60-ական թվականների սկզբներին դրանց բացարձակ մասը ձուլվել էր ադրբեջաներենի հետ:

ԼՂԻՄ-ի քաղաքական համակարգում գերակշիռ դեր ուներ ՌԿ/բ/Կ-ի մարզային կազմակերպությունը: Այն գերազանցապես զբաղվում էր կոմունիստական գաղափարախոսության գովազդով և սոցիալիզմի հակառակորդների լիկվիդացման քարոզչությամբ: Անհարազատ տարրերը տնտեսության ասպարեզում կոչվում էին կուլակներ, իսկ քաղաքական կյանքում՝ դաշնակներ, նացիոնալ-ուկլոնիստներ, հակաբոլշևիկյան և հակաժողովրդական թափթփուկներ: Այսպես՝ 1933 թվականի օգոստոսին Բաքվից ժամանած մի հանձնաժողով ԼՂԻՄ-ում <<հայտնաբերեց>>դաշնակցական-հայկական նացիոնալիստական խմբավորումներ, որոնք թափանցել էին Հայաստանից: Օգոստոսի 14-ին Մարզկոմի պլենումը նացիոնալիստական թափթփուկների պիտակ կպցրեց կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Կարո Գրիգորյանին, կուսակցական վերահսկողության հանձնաժողովի նախագահ Հայկ Սարգսյանին և մի խումբ կուսակցական ու պետական գործիչների:[3] Քաղաքական համակարգի ենթակառուցվածքների մեջ ճնշում չէր գործադրվում միայն արհմիութենական կազմակերպությունների վրա: Կանոնակարգում մարզգործկոմի ֆունկցիաների թվարկման մեջ ընդգծվում էր հասարակական-մասսայական միջոցառումների խստիվ վերահսկողության անհրաժեշտությունը՝ բացառությամբ արհմիութենական կազմակերպության միջոցառումների: Ծանոթագրությամբ հատուկ նշվում էր, որ պետական խստիվ վերահսկողությունը չի վերաբերում արհմիութենական կազմակերպությանը[4]:

Չնայած որ քաղաքական կյանքում մարզային ղեկավար մարմինները միշտ եղել են ադրբեջանական իշխանությունների հսկողության տակ, և բացառված չեն եղել ազգային ինքնագիտակցությամբ օժտված ղեկավար կադրերի պաշտոնազրկումը, հաճախ նաև քրեական պատասխանատվության ենթարկումն ու աքսորումը, այնուամենայնիվ, օգտվելով լիազորված իրավասությունից՝ ինքնավարության կազմավորման նախնական փուլում մարզի ղեկավարությունը գերխնդիր է համարել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հավատի վերականգնումն ու տնտեսական առաջընթացը, որի միջոցով միայն կարելի կլիներ պահպանել ղարաբաղցու անբաժան կապը իր հողի հետ: Այս միտումով էլ մարզի պետական կառույցը ձեռնարկեց այնպիսի առաջնահերթ խնդիրների լուծումը, ինչպիսիք էին մեքենա-տրանսպորտային պարկի ստեղծումը, կաթնամթերքի վերամշակման գործարանի կառուցումը, մետաքսաարտադրության ֆաբրիկաների գործարկումը, տեղական հումքի միջոցով շինանյութերի կոմբի-

[1] Տես. Նույն տեղը, էջ 10
[2] Տես. <<Սովետական Ղարաբաղ>> թերթ, 29-ին հունվարի, 1934թ., հ. 4
[3] Տես. <<Խորհրդային Ղարաբաղ>> թերթ, 28-ին օգոստոսի, 1933թ., հ. 190
[4] Տես. ԼՂՀ պետարխիվ., ֆ-1, ց-1, կապ. 1, պմ. 1., էջ 22

նատի կառուցումը, մարզկենտրոնում պետական թատրոնի ստեղծումը, դպրոցաշինարարությունը և այլ խնդիրներ:[1] Մարզային սովետի 1924 թվականին կայացած համագումարի զեկուցագրում նշված էր, որ ինքնավարության առաջին տարում վերանորոգվել են մարզկենտրոնի ավերված 30 տներ, ընթացքավորվել են գյուղատնտեսական տեխնիկումի և մարզհեղկոմի շենքերի կառուցման աշխատանքները, գործարկվել են փոստը, հեռագրատունը, ռադիոկայանը, ձեռնարկվել են աշխատանքները հիդրոէլեկտրակայանի կառուցման և շրջկենտրոնների հետ հեռախոսային կապի ստեղծման համար:[2] Ինքնավարության առաջին փուլում զգալի աճ է գրանցվել նաև ազգաբնակչության թվաքանակում: 1926-38 թվականների ժամանակահատվածում մարզի բնակչությունը աճել է 26 հազարով:[3] 1926 թվականի օգոստոսին կայացած սովետների մարզային համագումարի որոշման մեջ նշվում էր նաև Հայաստանի մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու համար երաշխավորել շնորհալի երիտասարդների:[4] 1930-ական թվականներին ԼՂԻՄ-ի իշխանությունները բարեկամական կապեր են ստեղծել Կաբարդինո-Բալկարիայի և Աբխազիայի ինքնավար հանրապետությունների հետ:

ԼՂԻՄ-ում պետականության կայացումն ու հասարակության կյանքում նրա կատարած դերն արտահայտվում են նաև ինքնավարության կազմավորման առաջին տարիներին մարզում կատարվող սոցիալ-մշակութային վերափոխումների ասպարեզում: Դա հաստատվում է արխիվային փաստաթղթերի տվյալներով: Այդ տվյալների համաձայն՝ ինքնավարության հռչակման նախօրյակին Լեռնային Ղարաբաղի գյուղական վայրերում գործում էին ընդամենը երկու ակումբ[5]: Բնակչության 80 տոկոսը անգրագետ էր, իսկ գյուղական վայրերում այդ թիվը հասնում էր 90-ի[6]:

Մարզի իշխանությունները անգրագիտությունը հայտարարեցին որպես սոցիալական չարիք և, իբրև այդ չարիքի վերացման միջոց, որոշեցին դպրոցական ցանցի ընդլայնման հետ մեկտեղ կազմավորել նաև տարիքով բնակչության անգրագիտության վերացման ցանց: Այն կոչվեց լիկկյանների խմբակային ուսուցման համակարգ: 1920-ական թվականների երկրորդ կեսին այդ համակարգը գործում էր մարզի գյուղական բոլոր վայրերում: 1930 թվականին մարզի գյուղերում գործում էին 620 այդպիսի խմբակներ՝ 24 հազար ունկնդիրներով: Եթե 1914-15 ուսումնական տարում մարզի տարածքում գործում էին 49 դպրոցներ՝ 3010 սովորողներով, ապա 1927-28 ուսումնական տարում գործում էին 140 դպրոցներ՝ 15059 սովորողներով:[7]

Փաստացի տվյալներով ու եզրահանգումներով հիմնավորվում է այն տեսակետը, որ բոլշևիկների իշխանության կողմից Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական Հանրապետությանը ապօրինի բռնակցելով հանդերձ, կազմավորված ինքնավարությունը կայացել է իբրև ազգային պետականության յուրահատուկ ձև: Մեր ներկայացրած արխիվային փաստարկները չպետք է դիտել որպես պատմական այդ ժամանակահատվածում ադրբեջանական քաղաքական էլիտայի ազգային լիբերալ քաղաքականության կիրառում ԼՂԻՄ-ում: Մեր կարծիքով՝ անցյալ դարի 20-ական թվականներին Ղարաբաղում պետականության կազմավորման ինքնավարական ձևը, ըստ երևույթին, հենվում էր խորհրդային իրավակարգում գործող, այսպես կոչված՝ լենինյան սկզբունքի վրա: Ինչպես արդեն նշվել է վերը, Լենինի տեսական ուսմունքում սկզբունքային

[1] Տես., ԼՂՀ պետարխիվ, ֆ-1, ց-3, կապ. 1, էջեր 5-16
[2] Տես. ԼՂՀ- ի պետարխիվ, ֆ-10, ց-1, էջ 19
[3] См. Достижения Сов. Нагорного Карабаха за 60 лет в цифрах, Баку, стр. 30
[4] Տես. ԼՂՀ- պետարխիվ, ֆ-2, ց-1, գ. 133, էջ 13
[5] Տես ԼՂՀ- պետարխիվ, ֆ-10, ց-1, գ. 5, էջ 22
[6] Նույն տեղը, ֆ-460, ց-1, գ. 2, էջ 4
[7] См. Достижения Сов. Нагорного Карабаха за 40 лет в цифрах, Степанакерт, 1963г., стр. 123

կողմնորոշումը եղել է ազգերի քաղաքական ինքնորոշումը՝ որպես որոշիչ պայման ազգային հարցի լուծման համար: Լենինյան տեսական սկզբունքը պրակտիկայում գործառվեց <<լայն ինքնավարություն>> շնորհելու եղանակով: Արևելքում սոցիալիզմի տարածման ռազմավարական նպատակով մուսուլմանական սոցիալիստական օրինակելի Ադրբեջանի համար Մոսկվայի իշխանությունները Հայաստանի մի հատվածը նվիրեցին <<վեհ նպատակին>>՝ միաժամանակ հայերին սիրաշահելով <<լայն ինքնավարությամբ>> և կենտրոնի կողմից այդպիսի ինքնավարության իրագործման համար վերահսկողությամբ: 30-ական թվականների երկրորդ կեսերից սկսած՝ Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղում վարել են ռազմավարական նպատակաուղղված հայատյաց քաղաքականություն: Այդ ռազմավարության նպատակախնդիրը եղել է Ղարաբաղի ազգագրական կազմում ադրբեջանցիների թվաքանակի աստիճանաբար մեծացման միջոցով հասնել մարզային իրավասության լուծարմանը: Ի դեպ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ադրբեջանական մեջլիսի մի նիստում Հեյդար Ալիևը հպարտությամբ հայտարարել է, որ Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի իր պաշտոնավարության տարիներին Լեռնային Ղարաբաղում ավելի քան 10 տոկոսով աճել է ադրբեջանցիների թիվը:

Կարծում ենք, որ իրավացի կլինի միանշանակ եզրահանգել, որ խորհրդային տարիներին ԼՂԻՄ-ում գործող քաղաքական ղեկավար կառույցն իր էությամբ կայացած պետականության ձև էր:

Տեղեկություններ հեղինակի մասին

Ալվարդ Աբրահամյան – ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն
E-mail: alvard.abrahamyan@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Ենգոյանը: